ՔՆՆԱՐԿՈՒՄ

«ՇԱՌԱՓ, ՅՈՂԵԼ, ԾՈՐԱԼ» ԻՄԱՍՏՆԵՐՈՎ ՀԱՅԵՐԵՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

DOI: 10.54412/2738277X-2021.1-127

Զաքարյան Հովհաննես
բանասիրական գիտությունների թեկնածու,
«Տաթև» գիտակրթական համալիր,
լեզվաբանության բաժանմունքի ղեկավար.
hovzakaryan@yahoo.com

Բանալի բառեր. հայոց լեզու, հնդեվրոպական նախալեզու, ստուգաբանություն, արմատային տարբերակներ, աճական, ձայնդարձ, շարժուն s-, ածանց, իմաստային հանրույթներ:

Բառիմաստների պատմական փոփոխություններն ու ճյուղավորումները երբեմն թվում են անսպասելի, չնայած դրանք միշտ էլ բացատրելի են և, որպես կանոն, տիպաբանորեն հանրույթային: Իմաստային ճյուղավորումների բազմազանության ու մեծ ցրվածքի դեպքում հաճախ նպատակահարմար է լինում ճյուղերի զատ-զատ ուսումնասիրումը: Հնդեվրոպական *sk'ei-/*sk'āi-/*sk'əi- «ցայտել; ցատկել» արմատից և դրա՝ աճականներով ընդլայնված տարբերակներից ու ածանցյալներից սերված հայերեն բառերի շարքում, ըստ հրապարակված աղբյուրների[1], կան **ցայտ (ցաթ, ցեթ)** «ցալ-

---

* Ներկայացվել է 25.07.2021, գրախոսվել՝ 23.09.2021 :

[1] **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հհ. 1-4, Ե., 1971-1979 (այսուհետ՝ ՀԱԲ), **Գ. Ջահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010 (այսուհետ՝ ՀՍԲ), **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987 (այսուհետ՝ ՀԼՊ ՆԺ), **Է. Աղայան**, *Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974 (այսուհետ՝ Աղ.), **Մ. Աղաբեկյան**, *Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր*, Ե., 2017, **Հ. Զաքարյան,** *«Ցատկել, ցայտել, ժայթքել» իմաստներով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն.-*

քուն, շիթ, կաթիլ», **ցալքուն (ցելթուկ)** «ցայտեր», **շիթ** «1. ցայտ, 2. կաթիլ», **շիռ** «լի, առատ» (որից՝ **շռայլ** «առատորեն շաղ տվող»), **ցռկիլ** «1. ցայտել, ժայթքել, 2. ցատկել», **ցռթ(կ)ել** «1. ցնկնել, 2. ծրտել, 3. ցռել, 4. ստինքից կաթ ծծել (շան, կատվի)», **ցրտկեցնել, ցրիտցնել** «ցայտեցնել», **ցրքել** «թափել, ցրցրել», **ցրքտել** «վրան ցայտել, ցողել», **ցայել** «ցողել, պարզաջրել», **ցանել** «1. շաղ տալ, սփռել, 2. ցողել, ցայել», **ցիր** «սփռված, շաղ եկած» (որից՝ **ցրան** «ցալքուն, ցայտեր»), **շքթել (ժքթել)** «ցայտեցնել, սրսկել», **ժայթք-ել (ժայտքել)** «1. ուժգին արտավիժել, 2. թափով բխել» բառերը։ Դրանք ունեն իմաստային ընդհանրություն՝ «ցայտ, շիթ, կաթիլ», որ կապվում է հեղուկի տեղաշարժի և թացության հետ։ Սույն հոդվածը նվիրված է նշված իմաստային դաշտին վերաբերող նույնարմատ մի շարք այլ հայերեն բառերի ստուգաբանությանը կամ վերաստուգաբանությանը։

Ցօղել (ցաւղել) «1. ցայել, ջուր ցանել՝ շաղ տալ, 2. թեթև անձրևել, շաղել» բառը Հ. Աճառյանը և Գ. Զահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 4, 466, ՀՍԲ, 742)։ Նկատի ունենալով վերոհիշյալ **ցալքուն (ցելթուկ), ցայել, ցայտել, ցանել, ցրել** և այլ բառերի հետ իմաստային և ձևային նմանությունը՝ առաջարկում ենք հ.-ե. նույն արմատից բխեցնել նաև սույն արմատը՝ **ցաւղ** <*sk'əu-l- <*sk'e-l- <*sk'ei- (*sk'āi-, *sk'əi-) «ցայտել; ցատկել» անցմամբ[2]։

Ցղել «1. ցայտել, 2. ցողել, ողողել» (ՀԼԲԲ[3], Զ, 280) բառը Հ. Աճառյանը և Գ. Զահուկյանը համարել են անհայտ ծագման

«Զահուկյանական ընթերցումներ» հայերենագիտական միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2020, էջ 65-76 (այսուհետ՝ Զաք.-2020)։

[2] Այլ լեզուներում առկա զուգաբանություններից հիշենք՝ թոխ. Բ kärsk- «նետել, շպրտել, շաղ տալ, ցրել, տարածել», հ.հնդկ. kiráti, kīryate, kīrṇa- «ցրել, շաղ տալ, նետել, ոթել, դուրս թափել», բուլղ. скок «1. ցատկ, 2. ջրվեժ», հ.նորվ. skolpa, ս.գերմ. schulpen «լվալ, ողողել, ցայել», լիտվ. skàsti, skãsta, skãtō «ցատկել, ցայտել» [տե՛ս **S. Nikolaev**, *Database of Indo-European etymology*.- http://starling.-rinet.ru/ (այսուհետ՝ Նիկ.), *sker-, *skek- «ցատկել, վազել», *sk^{w}Alb- / *sk^{w}elb- «լվալ, ողողել, ցայել», *skat- «ցատկել, ցայտել, ժայթքել», **J. Pokorny**, *Indogermanisches etymologisches Wörterbuch.* Bern-München, 2005 (այսուհետ՝ Պոկ.) (http://dnghu.org/ indoeuropean. html), (s)ker-2, skerə-: skrē- «ցատկել, շուռ տալ»]։

[3] *Հայոց լեզվի բարբառային բառարան,* հհ. Ա-Է, Ե., 2001-2012։

(ՀԱԲ, 4, 458, ՀՍԲ, 743)։ Սակայն Գ. Ջահուկյանը մի վերապահում է արել. «Հազիվ թե կապ ունենա հ.-ե. *sk'e-l- «ցատկել» արմատի հետ»։ Այս ենթադրությունից ելնելով՝ կարծում ենք, որ սա **ցօղել** (**ցաւղել**) բառի ձայնդարձային մի տարբերակ է (հմմտ. բրբռ. **ցղուել** (ՀԱԲ, 4, 466), **ցուղիլ** (ՀԼԲԲ, Զ, 280))։ Ուստի առաջարկում ենք **ցղել** <***ցուղ-ել** <*sk'ō-l- <*sk'el- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը։

Ցնցուղ «1. ջրցանիչ, ջուր սրսկելու գործիք, 2. ականջի լսողական խողովակը, 3. բրոնխներ» (որից՝ **ցնցղել, ցնցխել** «1. ցողել, շաղ տալ, շթարկել, 2. շռայլել, վատնել, ցփնել», **ցնցղկել, ցնցղնել** «ջուր ցողել՝ սրսկել») բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 4, 459-460, ՀՍԲ, 744)։ Սակայն հայտնի է, որ սա կրկնավոր է (***ցուղ+ցուղ***)[1], և արմատը նույնն է, ինչ **ցղել** բառի դեպքում։ Հետևաբար հ.-ե. նախաձևն էլ նույնն է՝ *sk'ō-l-։

Ցփնել «1. ցողել, ցայել, ցնցղել, ցրցամ տալ, սրսկել, 2. շաղ տալ, սփռել, ցրել, 3. շպրտել, նետել, դեն նետել, 4. շռայլել, ծախսել, վատնել» (Մալխ.[2], 2, 475) բառը ստուգաբանական բառարաններում տեղ չի գտել։ Նկատի ունենալով իմաստային նմանությունը վերոհիշյալ մի շարք բառերի հետ (*ցրքտել, ցրտկեցնել, ցողել, ցայել, ցնցղել* և այլն)՝ առաջարկում ենք **ցփնել** բառի համար վերականգնել ***ցուփ-** <*sk'ō-ph- արմատը, որի նախաձևը դարձյալ հ.-ե. <*sk'ei- «ցայտել; ցատկել» արմատի ածանցյալ է[3]։ Ինչ վերաբերում է **ն** բաղադրիչին, ապա դա թերևս արմատի հավելատարր է (հմմտ. *արծնել, բռնել, խառնել, հիմնել, օգնել, ճգնել, խռնվել* և այլն)։

Ցոցռալ «1. հորդառատ անձրև տեղալ, 2. տարբեր կողմերի վրա ծորել, 3. հատիկ-հատիկ թափվել» (ՀԼԲԲ, Զ, 283) բառը ստուգաբանական բառարաններում չկա։ Այս բայի հիմքը կրկնավոր

---

[1] Տե՛ս ՀԱԲ, 4, 460, 466, **Հ. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. III, Ե., 1957, էջ 92։

[2] **Ս. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, հհ. 1-4, Ե., 1944-1945։

[3] Այլ լեզուներից հմմտ. հուն. σκαίρω, σκιρτάω «ցատկում եմ» (Նիկ., *skek- «վազել, ցատկել, բխել»), հուն. ἐσκάριζεν «ցատկել» (Պոկ., 950, skēt- : skət- «ցատկել»)։

է՝ *ցո+ցո+ալ*: Չինչյունափոխված արմատն է **ցիռ**: Առաջարկում ենք **ցռ-**<*__ցիռ__- <*sk'ē-r-s- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը:

Շաղ[4] «1. ցող, 2. խոնավություն, թացություն, 3. շիթ, կաթիլ, 4. ցրում, 5. շփոթ» (որից՝ **շաղել** «1. բարակ անձրևել, 2. խառնել», **շաղ(շղու)իլ** «շփոթվել», **շաղուել**[5] «1. շշմել, 2. մթագնել, պղտորվել, 3. կտրվել, մակարդվել, փսորվել, 4. ցրիվ գալ, 5. խառնվել», **շաղ տալ** «1. ցրել, 2. ցանել, 3. ցողել, 4. ափեղցփեղ խոսել», **շաղախ** «թաց խառնուրդ, ցեխ»[6]) բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 3, 487, ՀՍԲ, 579): Պոկոռնու, ինչպես նաև Նիկոլաևի բառարաններում **շաղել** և **շաղախ** բառերը բխեցված են հ.-ե. *k'wel- «թաց և փափուկ, կավ» արմատից (Պոկ., Նիկ), սակայն Հ. Աճառյանը մերժել է այս ստուգաբանությունը (ՀԱԲ, 3, 487): Այս **շաղ** բառը, կարծում ենք, վերոհիշյալ **ցօղ (ցաւղ)** հոմանիշի ձայնդարձային տարբերակն է՝ **ց/շ** հերթագայությամբ: Հետևաբար առաջարկում ենք **շաղ** <*skhə-l- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը[7]:

---

[4] Սա ունի իր **շաղ** «կապ, միացում» համանունը, որը Գ. Ջահուկյանը կապել է **շեղ, խեղ** <*(s)khel- «ծռել, հենել, ծուռ» բառերի հետ (ՀՍԲ, 579):

[5] **Շաղուել, շաղ(շղու)իլ** «շփոթվել, սխալվել» բառերը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են **շաղ** «շեղ, ծուռ» արմատի ածանցյալներ (ՀԱԲ, 3, 508, 490, ՀՍԲ, 579): Սակայն այն փաստը, որ հենց Գ. Ջահուկյանը **շրտնուլ** «1. խրտնել, վախենալ, 2. շվարել, շփոթվել» բառը բխեցրել է *skhē-r-d- «ոստնել, ցատկել» նախաձևից (ՀՍԲ, 597), հիմք է տալիս **շաղուել, շաղ(շղու)իլ** բառերի ստուգաբանությունը վերանայելու և համարելու **շաղ** «ցող, թաց» արմատի ածանցյալներ՝ համապատասխան իմաստային զարգացումով: Նկատի ենք ունեցել նաև այն հանգամանքը, որ **շաղ/շեղ/շիլ/խեղ** «ծուռ» արմատի այլալեզու զուգաբանությունների շարքում չկան «շփոթ(ել)» իմաստով բառեր (տե՛ս ՀԱԲ, 2, 356, խեղ): Չպետք է մոռանալ նաև նշված համանուն արմատների իմաստային զարգացումների հետևանքով խաչաձևումների և բաղարկումների հնարավոր առկայությունը և դրանց սահմանազատման հարաբերականությունն ու պայմանականությունը:

[6] Սա Հ. Աճառյանի կարծիքն է (ՀԱԲ, 3, 487-488), մինչդեռ Գ. Ջահուկյանը նախընտրելի է համարել **շաղախ**-ը՝ որպես «կապակցող խառնուրդ», առնչել **շաղ** «կապ, կցում» արմատին (ՀՍԲ, 579):

[7] Այս բառից են կազմված նաև **շաղռունչ (շաղռունջ), շաղափուք, շաղուռուց** հոմանիշները, որ նշանակում են «շաղոտ խոտ արածելուց անասունի փքվելը» (Մալխ., 3, 496): **Շաղռունջ**-ի համար ենթադրում ենք *շաղ+ուռ+ունջ* կազմությունը,

Շող[8] **(շոլ)** «1. թացություն, խոնավություն, 2. շաղ, ցող» (որից՝ **շողոտ** «1. լորձունքոտ, 2. խխունջի մի տեսակ, 3. կողինջ» բառը (Մալխ., 3, 530)) բառը Հ. Աճառյանը իրավացիորեն համարել է վերոհիշյալ **շաղ** «ցող» արմատի ձայնդարձային տարբերակ՝ որպես դրա ածանցյալ դիտարկելով **շող(իք)** «լորձունք, թուք» բառը (ՀԱԲ, 3, 529)։ Գ. Ջահուկյանը անվերապահորեն բխեցրել է հ.-ե. *k'uol-՝ *k'uel- «տղմոտ, ցեխոտ (՞)» արմատից, որի հետ է կապել նաև *շաղ, շաղախ* բառերը (ՀՍԲ, 591), ընդ որում՝ *շաղախ*-ը համարել է ոչ թե **շաղ** «ցող, շիթ», այլ համանուն **շաղ** «կապ, կցում» բառի ածանցյալ, վերջինս էլ կապել է **շեղ** (<*skhe-l- «ծռել, հենել, ծուռ») բառի հետ (ՀՍԲ, 579, 585)։ Իմաստային անցման այս շղթան բավարար համոզիչ չէ։ Ուստի հետևում ենք Հ. Աճառյանի տեսակետին։ Բայց քանի որ նա **շող** «թացություն» (ինչպես նաև **շաղ** «ցող») բառի համար նախաձև չի վերականգնել, առաջարկում ենք **շող (շոլ)** <*skho-l- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը։

Շլոփայ «1. ջրալի ցեխ թաց ձյան կամ հալոցքի ժամանակ, ջրցեխ, 2. անձրևախառն ձյուն» բառը (Մալխ., 3, 520, ՀԼԲԲ, Դ, 251) ստուգաբանական բառարաններում չկա[9]։ Իմաստից ելնելով՝ կարծում ենք, որ դա վերոհիշյալ **շոլ (շող)** «թացություն» արմատի ածանցյալ է՝ ***շոլ-ոփ-այ*** կառուցվածքով (**–ոփ/-ափ** ածանցի համար հմմտ. *տ(ո)ր-ոփ, շորշ-ոփ, շարշ-ափ («շորշոփ, սարսափ» (ՀԼԲԲ, Դ, 213)), սարս-ափ (ՀՍԲ, 672), թարթ-ափ (ՀՍԲ, 260), խուս-ափ-ել (ՀՍԲ, 340), կարկ-ափ-ել (ՀՍԲ, 393), տար-ափ* և այլն, **–այ**-ի համար՝ *ան-ուղղ-այ, ան-զգ-այ, վայ-վաղ-այ, արք-այ, առ-արկ-այ, մօր-այ* և այլն)[10]։ Արևմտյան որոշ բարբառներում (Մշո, Կարնո ևն) կա նաև **շլի-շլոփայ** կիսահարադրությունը՝ որպես **շլոփայ**-ի սաստկական

որտեղ *ուռ*-ը արմատ է, *-ունջ*-ը՝ ածանց (**–ունջ/–ինջ/–անջ** ածանցի համար՝ հմմտ. *խխ-ունջ, տրտ-ունջ, մրմ-ունջ, եղ-ինջ, կոդ-ինջ, դոդ-անջ, վաղ-անջ-* և այլն)։

[8] Սա ունի իր **շող** «ճառագայթ, ճաճանչ, ցոլք» համանունը (<*k'olo- <*k'eu- «լուսավոր(ել)»՝ ՀՍԲ, 591), որի ածանցյալն է **նշոյլ <*նի+շոյլ** «ցոլք» բառը։

[9] **Շլոփայ**-ի նմանությունը ռուս. шлёпать «խփել, շպպացնել, շրխկացնել» բնաձայնական բառի հետ պատահական է։

[10] Տե՛ս նաև *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. 2, Ե., 1975, էջ 88-89 (այսուհետ՝ ՀԼՊՔ)։

ձև։ Սա արձանագրված չէ անգամ բարբառային բառարաններում։ Այս **շլի** բաղադրիչի արմատը թերևս նույն **շոլ**-ն է՝ ածականակերտ **-ի** վերջածանցով (ածանցի համար՝ հմմտ. *վայր-ի, աղ-ի, երկդիմ-ի, ապօրին-ի, տմարդ-ի, բար-ի, ձր-ի, մոլ-ի* և այլն)։

Շլթկել «ցայտել, ուժով դուրս թափվել, ուժեղ շիթով դուրս հոսել» բառը (ՀԼԲԲ, Դ, 247) ստուգաբանական բառարաններում չկա։ Իմաստից ելնելով՝ կարելի է պնդել, որ սա նույնպես հ.-ե. *sk'ei- «ցատկել, ժայթքել» արմատի ածանցյալներից է՝ ***շոլ-թ-ուկ-ել** կաղապարով։ Կառուցվածքով սրան նման են վերոհիշյալ նույնարմատ **ցոթ(կ)ել** «ցնկնել» և **ցրտկել** «դուրս ցայտել» բառերը։ Հետևվաբար առաջարկում ենք **շլթկ-ել** <*skho-l-թ- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը, որտեղ **թ**-ն ածական է, իսկ **-կ**-ն թերևս սղված **-ուկ** ածանցն է (հմմտ. *թզկել, լլկել, ծածկել, մղձկել, ցնցղկել, բռնկել, տմկել, թնջկել, ճապկել* և այլն)։

Շառապի «հորդ անձրև, (տեղա)տարափ, ջաղբ» բառը[11] Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 3, 497, ՀՍԲ, 581)։ Կարծում ենք՝ սա ածանցավոր կազմություն է՝ ***շառ-ապի*** (**-ապի/-ոպի** ածանցի համար՝ տե՛ս վերը), որի **շառ-** արմատի համար, ելնելով վերոհիշյալ **շաղ, ցօղ** բառերի հետ իմաստային կապից, ինչպես և **շիռ** «լի, առատ», **ցիր** «սփռված, ցրիվ» բառերի հետ նաև ձևային նմանությունից, առաջարկում ենք **շառ-** <*skhə-r-s- <*(s)ker- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը։ Արտաքին նմանության առումով հմմտ. *տարապի* հոմանիշը։

Շարաւ «թարախ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 3, 502, ՀՍԲ, 583)։ Նկատի ունենալով նախ, որ շարավին (թարախին) բնորոշ է վերքից (բշտիկից, թարախապալարից) ցայտելը, այնուհետև՝ ձևային նմանությունը **շառապի** բառին՝ առաջարկում ենք բառակազմական ***շար-աւ*** վերլուծությունը (**-աւ** ածանցի համար հմմտ. *կաղ-աւ-ել, անձ-աւ, հար-աւ, խարդ-աւ-անք* և այլն (տե՛ս նաև ՀԼՊՔ, 85)) և արմատի **շար-** <*skhə-r- <*(s)ker- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը։

[11] Սա ունի իր **շառապի** «լույս, ճառագայթ» համանունը (ՀԱԲ, 3, 497)։

Ջաղբ (ջաղջ) «(տեղա)տարափ, հորդ անձրև, շառափ, թոն, թաթավ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը չեն ստուգաբանել (ՀԱԲ, 4, 120, ՀՍԲ, 649)։ Իմաստային կապը **շառափ** բառի հետ և ձևային նմանությունը **շաղ, ցող** հոմանիշների հետ թույլ են տալիս ենթադրելու, որ գործ ունենք հ.-ե. միևնույն արմատի տարբերակների հետ։ Ուստի առաջարկում ենք **ջաղբ** <*sk'ʷhə-l-p/ջ- <*(s)k'el- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը, որտեղ **բ**-ն կամ **ջ**-ն աճական է։ Այս բառի ստուգաբանությամբ փաստորեն սահմանում ենք ***sk'ʷh > ջ** հնչյունական համապատասխանությունը[12]՝ ի լրումն բառասկզբի ***sk-** հնչյունակապակցության հայերեն անդրադարձնեբի *(s)k > **ք**, *(s)k' > **ս**, *(s)kh > **խ**, *sk > **կ**, *sk' > **ց**, *skh > **շ**, *(s)k'h > **ծ**, *sk'h > **ճ**, ***(s)kʷ**h > **զ**, ***skʷ**h > **ժ** շարքի[13]։ Այս վարկածի օգտին են վկայում նաև **ջախ (ջաղջ) – ջալ (ջայլ) – ճախ – ցախ, ջոխ – ճեխ – ճաղ – ճիւղ – շիւղ – ծեղ – ցօղ(ուն), ջախջախել – ճեճեխել, ջիլ – ճիլ, ջահ – ճառ** «կախովի ջահ» **– ճաղ** «եկեղեցու ջահ», **ջառ** «քարայր» **– խոռոչ – ծործոր – ծերպ – սոր** «ծակ» և այլ բառափնջերում առկա **ջ/ճ/ց, ջ/ճ/շ/ծ/ց, ջ/ճ/ծ, ջ/խ/ծ/ս** հերթագայությունների դեպքերը, որոնք բառասկզբի ***sk-**ի հնարավոր զարգացումների շրջանակում են։

Ջոփել «լվանալ, ցայել» (Մալխ., 4, 147, ՀԼԲԲ, 5, 196) գավառական բառը ստուգաբանական բառարաններում չկա։ Նկատի ունենալով վերոհիշյալ **շառափ, շիռ, ցոկիլ, ցոցռալ, ցփնել** և այլ բառերի հետ ձևային և իմաստային նմանությունները՝ առաջար-

---

[12] Նկատի պետք է ունենալ, որ **ջ**-ն որոշ դիրքերում (մասնավորապես քմային երանգ ունեցող e, i ձայնավորներից առաջ) կարող է ծագած լինել gʷh-ից, որտեղ առկա է շրթնայնության հատկանիշ, օրինակ՝ *gʷhermo- > ջերմ, *gʷhisla- > ջիղ (**Հ. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի,* հ. VI, Ե., 1971, էջ 541)։ Հետնալեզվային պայթականների քմայնացումը տարածված երևույթ է տարբեր լեզուներում։ Մասնավորապես հայերենում որպես տարածքային (բարբառային) զուգաձևություններ կարող են հանդես գալ *գինի – կ'ինի – ջինի, գէլ –կ'էլ – ջէլ* ևն (տե՛ս **Ա. Ղարիբյան**, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 221)։

[13] Տե՛ս Ջաք.-2020, 66, 73-75, **Հ. Ջաքարյան,** *Ճ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն. - «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ»*, 1-2 (22), Գյումրի, 2019, էջ 228-229։

կում ենք **ջռփ-ել** <*ջուռ-փ- <*sk'ʷhō-r-փ- <*(s)k'er- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը, որտեղ **փ**-ն աճական է:

Կաթ «կայլակ, պուտ, շիթ, ծոր» (որից՝ **կաթել, կաթիլ, կայլակ** <***կաթլակ, կթթալ** «կաթկթել, ծթթել») բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 479-480, 506): Գ. Ջահուկյանը, հետևելով Օլսենին, կասկածով կապել է հ.-ե. *gᵘət <*gᵘet- «կաթել» արմատին (ՀՍԲ, 371): Բայց սա Մեյեի և Պետերսոնի կարծիքն է, որ մերժել է Հ. Աճառյանը (ՀԱԲ, նույն տեղում): Նկատի ունենալով այս հակասությունը՝ առաջարկում ենք **կաթ** <*(s)kə-t- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը: Իմաստային անցման համար հմմտ. վերոհիշյալ նույնարմատ **շիթ** «ցայտ, կաթիլ», **ցայտ (ցայթ, ցաթ, ցեթ, ցէթ)** «ցալքուն, շիթ, կաթիլ», **շաղ** «ցող, թացություն, շիթ, կաթիլ» բառերը[14]:

Ծլուլ «1. քթից կախված ջրալի խլինք, ծլլուկ, կաթիլ, 2. շիթ» (որից՝ **ծլլալ, ծլծլալ** «ծորել, կաթել» (Մալխ., 2, 340)[15], **ծլլակաթ** «1. աշնան երկարատև բարակ անձրև, 2. բարակ կաթկթելով» (Մալխ., 2, 340), **ծլլի** «ուղիղ դեպի վեր (ծուխը)» (Մալխ., 2, 340)) բառը ստուգաբանական բառարաններում չկա: Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք **ծլուլ** <***ծուլ-ուլ** <*(s)k'hō-l- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը (-**ուլ** ածանցի համար հմմտ. *տան-ուլ, գլ-ուլ, թաթ-ուլ, կափ-ուլ, բալ-ուլ, փմփ-ուլ-իկ, սր-ուլ-իկ, զանգ-ուլ-ակ* և այլն (տե՛ս նաև ՀՍԲ, 811)):

Ծլթալ «կաթել» (որից՝ **ծթթել** «կաթկթել, կթթալ, ծլլալ, կաթիլ-կաթիլ ծորալ») բառը (Մալխ., 2, 340) ստուգաբանական բառարաններում չկա: Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք **ծլթ-ալ** <***ծուլ-թ-** <*(s)k'hō-l-թ- <*sk'e-l- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը, որտեղ **թ**-ն աճական է:

---

[14] Հմմտ. հ.լիտվ. skatau «ցատկել, խոյանալ, ոստնել» (ՀԱԲ, 4, 633), հ.հուն. ἐσκατάμιζεν «ցատկել», լատ. scaturriō «ցայտել, հորդել, տեղալ», scatebra «շիթ, աղբյուր, ակունք» (Պոկ., 950, skēt-: skət- «ցատկել»), լատ. scatūrriāre «փսխել», scateō, -ēre «ցայտել, ժայթքել» (Նիկ., *skat- «ցատկել, ցայտել, ժայթքել»):

[15] Հմմտ. **ճլճլալ**, որը, սակայն, վերաբերում է ոչ թե հոսելու ձևին, այլ հոսող հեղուկի հանած ձայնին:

Ծոր «1. հեղուկի շթաձև թույլ հոսք, անընդմեջ բարակ շիթ, 2. հնձվող խոտի երկարորեն փռվող շերտ, լաս(տ), 3. ձայնի անընդմեջ ընթացք»[16] (որից՝ **ծորալ** «բարակ շիթով դանդաղ հոսել՝ թափվել», **ծորել** «խոտը հնձելով փռել», **ծոր տալ** «ձայնը երկարացնելով խոսել»)[17] բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 469)։ Գ. Ջահուկյանը կասկածով ենթադրել է կովկասյան (քարթվելական) փոխառություն (մինչդեռ Հ. Աճառյանը կովկասյան զուգահեռներն է համարել հայերենից փոխառություն) կամ թ/ծ հերթագայությամբ հ.-ե. *(s)ter- «անմաքուր հեղուկ» արմատից (որից՝ նաև *թորել, թարախ* բառերը) (ՀԱԲ, 367)։ Նկատի ունենալով իմաստային կապը **շիթ, ցոցռալ, ծլծլալ, ծթթել, կաթել** բառի հետ՝ առաջարկում ենք **ծոր** <*(s)k'hor- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը։

Սոր «արտավիժում, վիժանք, հոսք (մանրահատիկ նյութերի, ալյուրի)» (որից՝ սորալ (սորել) «սահելով թափվել, հոսել (մանրահատիկ նյութը), արտավիժել (ալյուրը)», սորել «1. ծորել, հոսել, 2. ծորթփել, սորթփել, խոտը հնձելով փռել»[18]) բառը (Մալխ., 4, 243-244) Հ. Աճառյանը համարել է սոր «ծակ, խոռոչ, որջ, բույն» (<*k'ovros- «փոս, խոռոչ» <*k'eu̯- ուռչել, կամարաձև լինել») արմատի իմաստային զարգացում (ՀԱԲ, 4, 245-246), իսկ Գ. Ջահուկյանը այսպիսի իմաստային զարգացում պարզապես չի քննարկել (ՀԱԲ, 688)։ Բայց նկատի ունենալով իմաստային և ձևային նմանությունը վերոհիշյալ ծոր բառի հետ՝ կարծում ենք, որ մի կողմից՝ ունենք սոր «հոսք» և սոր «ծակ» համանունություն, մյուս կողմից՝ սոր

---

[16] Այս արմատին համանուն է **ծոր** «կոծոխուր, բարբարիս (հատապտուղ)» բառը (ՀԱԲ, 2, 468-469)։

[17] Հ. Աճառյանը այս **ծոր** արմատի ածանցյալ է համարել նաև **ծործոր** «1. ձոր, խոխոմ, հովիտ, 2. խորշ, ծերպ, 3. նեղ հեղեղատ» կրկնավորը, սակայն կարծում ենք, որ վերջինս ավելի հարմար է կապել **կիրճ**-ի հետ, որ բխեցվում է հ.-ե. *(s)ker- «կտրել, ճեղքել» արմատից (**Հ. Զաքարյան**, *Կարիճ, կարճ, կիրճ և մի քանի այլ բառերի ստուգաբանություն. - «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում»*, գիտական նյութերի ժողովածու, Ե., 2016, էջ 87-91)։

[18] Հ. Աճառյանը այս ածանցյալների շարքին է դասել նաև սռալ «ինքնիրեն հոսելով թափվել (սարի հողը)» գավառական բառը (ՀԱԲ, 4, 245-246)։

«հոսք» և ծոր «հոսք, շիթ» բառերի նույնարմատություն՝ u/ծ հերթագայությամբ։ Ինչ վերաբերում է սրանց համանուն սոր «1. ծակ, 2. ձոր», ծոր (ծործոր) «ձոր» բառերին, ապա դրանք պետք է կապել հ.-ե. *(s)kei- «կտրել, ճեղքել» արմատի հետ՝ «ճեղք, պատռվածք > կիրճ, ձոր» իմաստային անցմամբ, ինչպես որ **կիրճ** (տե՛ս վերը), ռուս. ущелье «կիրճ» (щель «ճեղք»-ից[19]), բուլղ. **проло́м** «ձոր, կիրճ» (лом- «ճեղք, ճաք, կոտրվածք» արմատից (տե՛ս ՎԲԱ, **проло́м**)), գերմ. Kluft «1. ծերպ, ճեղք, 2. անդունդ, վիհ, կիրճ» (< նախագերմ. **kluftiz* «ճեղքում», որից՝ անգլ. *cleft* «ճեղք, կիրճ» (տե՛ս ՎԲԱ, Kluft)) բառերը[20]։ Ճիշտ է, այս համանունների միջև երբեմն իմաստային աղերսներ են նկատվում (օրինակ՝ սորան «1. անդնդախոր կիրճ, 2. լեռնիվայր սահուղի (գերաններ տեղափոխելու համար» (ՀԼԲԲ, Ե, 381)), բայց դա թերևս պետք է համարել բաղարկության հետևանք։ Իսկ **սոր** «արտավիժում, վիժանք, հոսք» բառի համար առաջարկում ենք հ.-ե. *(s)k'or- (<*sk'ei- «ցայտել; ցատկել») նախաձևը։

Ճևալ «ծորալ, կաթելու ժամանակ երկարել» (որից՝ ճևել «ձգելով երկարացնել», ճևան «ծոր տվող») բառը (ՀԼԲԲ, Գ, 379) ստուգաբանական բառարաններում չկա։ Եթե փորձենք իմաստային հիմունքով սա ևս համարել վերոհիշյալ բառերին համարմատ, ապա կարելի է առաջարկել **ճեւ-ալ** <*sk'heu- <*sk'ei- «ցայտել; ցատկել» ստուգաբանությունը։

---

[19] Հմմտ. նաև լիտվ. skélti, skeliù, լատվ. šķel^t, šķeļu «ճեղքել», լատվ. šķèle «1. կտոր, 2. հագուստի կտրվածք», šķila «բեկոր, ծղան, ճղոն», լիտվ. skìltis «կտրված մաս», skylẽ ж. «ծակ», հ.իսլ. skilja «բաժանել, ճեղքել», հուն. σκάλλω «կտրում եմ, փորում եմ», հայ. ցելուլ «ճեղքել, պատռել», խեթ. iškallāi- «կոտրել, պոկել», ռուս. скала́ «ժայռ, քերծ», оско́лок «բեկոր», ско́лька «հատված» (ՎԲՌ, ще́лье)։

[20] «Ձոր, կիրճ» նշանակող տարբեր բառեր կարող են ծագած լինել տարբեր բնիմաստներից։ Հ. Աճառյանը **ծոր** բառի ստուգաբանության առիթով բերել է «հոսող ջուր (գետ) > ձոր» իմաստային անցման օրինակներ որոշ լեզուներից (արաբ. vād, թրք. dere «գետ» և «ձոր») (ՀԱԲ, 468-469)։ Բայց իմաստային անցման այս ուղին ընտրելու դեպքում նույնանում են հ.-ե. համանուն *sk'ei- «կտրել, ճեղքել» և «ցատկել, ժայթքել» արմատները՝ առաջ բերելով իմաստների խառնաշփոթ և տանելով դեպի գերանորոշություն (ռելյատիվիզմ)։ Մեր նախընտրած ուղին տվյալ դեպքում այդպիսի բարդությունների և հակասությունների տեղիք չի տալիս։

Օգտագործված գրականություն

Աղաբեկյան Մ., Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր, Ե., 2017:

Աղայան Է., Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Ե., 1971-1979:

Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. VI, Ե., 1971:

Զաքարյան Հ., «Ցատկել, ցայտել, ժայթքել» իմաստներով հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն.-«Զահուկյանական ընթերցումներ» հայերենագիտական միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2020, էջ 65-76:

Զաքարյան Հ., *Ճ* սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն.- «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ», 1-2 (22), Գյումրի, 2019:

Զաքարյան Հ., *Կարիճ, կարճ, կիրճ* և մի քանի այլ բառերի ստուգաբանություն.- «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում», գիտական նյութերի ժողովածու, Ե., 2016:

Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, Ե., 2001-2012:

Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Ե., 1975:

Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1944-1945:

Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Nikolaev S., Database of Indo-European etymology. - http://starling.-rinet.ru.

Pokorny J., Indogermanisches etymologisches Wörterbuch. Bern-München, 2005 (http://dnghu.org/indoeuropean.html).

Zakaryan Hovhannes- Etymology of Several Armenian Words Meaning «Downpour; to Spray; to Trickle». – The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward the following new etymologies: **ցօղ-ել** «to spray» <*sk'əu-l- <*sk'ei- (*sk'āi-, *sk'əi-) «to jump, to splash out», **ցփնել** «to splash» <***ցուփ-ն-ել** <*sk'ō-ph-, **շաղ** «dew» <*skhə-l-, **շլոփայ** «slush» <***շոլ-ոփ-այ** <*skho-l-, **շառ-ափ** «downpour» <*skhə-r-s-, **ջաղբ** «downpour» <*sk'ʷhə-l-p-, **կաթ-ել** «to drip» <*(s)kə-t-, **ծլուլ** <***ծուլ-ուլ** «snot» <*(s)k'hō-l-, ծոր-ալ «to trickle» <*(s)k'hor-, unr-ալ «1. to trickle, 2. to pour in (granular materials)» <*(s)k'or-, ճև-ալ «to trickle» <*sk'heu- etc.

Keywords: Armenian, Proto-Indo-European, etymology, root variants, determinative, vowel gradation, s-mobile, affix, semantic universals.

Zakaryan Hovhannes, PhD of Philology, the Head of Linguistic Department of "Tatev" Center of Research and Education.
hovzakaryan@yahoo.com

Закарян Оганес- Этимология некоторых армянских слов, обозначающих «ливень; опрыскивать; сочиться». – В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагаются следующие новые этимологии: **ցօղ-ել** «опрыскивать» <*sk'əu-l- <*sk'ei- (*sk'āi-, *sk'əi-) «прыгать; выплескиваться», **ցփնել** «разбрызгать» <***ցուփ-ն-ել** <*sk'ō-ph-, **շաղ** «роса» <*skhə-l-, **շլոփայ** «слякоть» <***շոլ-ոփ-այ** <*skho-l-, **շառ-ափ** «ливень» <*skhə-r-s-, **ջաղբ** «ливень» <*sk'ʷhə-l-p-, **կաթ-ել** «капать» <*(s)kə-t-, **ծլուլ** <***ծուլ-ուլ** «сопля» <*(s)k'hō-l-, ծոր-ալ «сочиться» <*(s)k'hor-, unr-ալ «1. сочиться, 2. сыпаться» <*(s)k'or-, ճև-ալ «сочиться» <*sk'heu- и т. д.

Ключевые слова: армянский язык, праиндоевропейский язык, этимология, корневые варианты, детерминатив, чередование, s-mobile, аффикс, семантические универсалии.

Закарян Оганес, кандидат филологических наук, руководитель лингвистического отдела Научно-образовательного комплекса "Татев".
hovzakaryan@yahoo.com